ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Նարեկ Հրանտի Գրիգորյանի «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման արդյունավետությունը խորհրդարանական կառավարման համակարգում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Քաղաքական վարչակարգերի ընտրության, դրանց արդյունավետ գործառնության, արդյունավետ պետական կառավարման համակարգերի ձևավորման խնդիրը բավական բարդ ու բազմավեկտոր գործընթաց է: Այն առանցքային նշանակություն ունի նաև քաղաքական համակարգի լավ կառավարմանը սպառնացող ռիսկերը չեզոքացնելու և պետության զարգացումը կանխորոշված ու ցանկալի ուղիով տանելու համատեքստում: Ի վերջո, քաղաքական վարչակարգի ընտրությունով և պետական կառավարման համակարգի ընտրությամբ են նաև պայմանավորված պետության զարգացման հնարավոր հեռանկարները:

Այժմ, առավել քան երբևէ, մասնագիտական շրջանակներում քննարկվում են ժողովրդավարությանն ու ժողովրդավարացման գործընթացներին վերաբերող հիմնահարցերը՝ չնայած այն հանգամանքին, որ քաղաքական այս վարչակարգի վերաբերյալ մոտեցումներն, ընդհանուր առմամբ, էականորեն տարբերվում են միմյանցից: Տարրբերություններ առկա են ինչպես բազմաթիվ տեսությունների ու մոդելների, այնպես էլ դրանց ներդրման հայեցակարգերի համատեքստում:

Ատենախոսի կողմից արդարացիորեն նշվում է, որ ժողովրդավարության վերաբերյալ բոլորի կողմից միանշանակ ընդունված սահմանումներ ու ընկալումներ այդքան էլ չկան, սակայն ժողովրդավարության առանցքը կազմող հիմնասյուների վերաբերյալ առկա է որոշակի կոնսենսուս, ավելին, այդ հիմնասյուները ժողովրդավարության տարբեր տեսությունների ու մոդելների

անբաժան մասն են հանդիսանում: Այս համատեքստում առաջնային կարևորություն է ստանում ժողովրդավարության տարբեր տեսությունների ուսումնասիրությունն ու դրանց համեմատական վերլուծությունները, ոչ միայն նմանությունների ու տարբերությունների վերհանման, այլ նաև արդյունավետ մոդելի որդեգրման տեսանկյունից:

Կոնսոցիատիվիզմն արդիական տեսություն է, քանզի այժմ գոյություն ունեցող գրեթե բոլոր պետությունների հասարակությունները այս կամ այն չափով հատվածական են: Այդ հասարակությունների առջև ծառացած խնդիրներին իրատեսական ու գործուն լուծումներ առաջադրելու գործընթացում կարևորվում է ոչ թե մեծամասնության շահերի ներկայացումը, այլ համամասնական եղանակով քաղաքական գործընթացներում ներգրավվածությունն ու մասնակցությունը, քանզի հատվածական շահեր ունեցողների հետաքրքրությունները չեն կարող անտեսվել: Խնդիրն առավել քան կարևորվում է նաև խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում կիրառման և պառլամենտարիզմի մշակույթի ձևավորման համատեքստում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև խորհրդարանական կառավարման համակարգում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառումն ուրվագծելու հեռանկարով և ՀՀ-ում կոնսոցիատիվիզմի ներդրման հնարավորությունների բացահայտմամբ:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, ուսումնասիրության մեթոդները, շարադրված են նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, սահմանված է տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի տեսամեթոդաբանական հիմքերը» վերտառմամբ առաջին գլխի երեք ենթագլուխներում ներկայացվել են կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսական և գործնական հիմքերը, տեսության մեջ առկա հիմնական մոտցումները: Վերջին ենթագլխում ատենախոսն իրականացրել է ժողովրդավարության մի քանի

հիմնական տեսությունների՝ վեստմիստերյան, պոլիարխիայի և մասնակցային, համեմատական վերլուծություն, առանձնացվել են նմանությունները և տարբերությունները: Իրականացված վերլուծությունը հնարավորություն է տվել վեր հանել ժողովրդավարության կոնսոցիատիվ և մյուս տեսությունների հիմնական բնութագրիչները, կիրառման ու ներդրման առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «Խորհրդարանական կառավարման համակարգը և խորհրդարանականության մշակույթը կոնսոցիատիվիզմի համատեքստում» գլխում ատենախոսը ներկայացրել է խորհրդարանական և կառավարման այլ համակարգերի համեմատական վերլուծության հիմնական արդյունքները, ինչպես նաև խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառման խնդիրներն ու ուղիները: Առանձնացված կարևորել է նաև «խորհրդարանական քաղաքական մշակույթի» հասկացության մեկնաբանությունն ու խնդրի դիտարկումը խորհրդարան-հասարակություն կապի ու առանձնահատկությունների բացահայտման համատեքստում: Վերջին ենթագլխում ներկայացվել են կոնսոցիատիվ ժողովրդավարության պայմաններում խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետությանը վերաբերող մի շարք հարցեր: Ատենախոսության այս հատվածում հեղինակի կողմից կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում վերլուծվել են նաև լավ կառավարման և ժողովրդավարության ինստիտուցիոնալացման և ժողովրդավարության խնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգի առանձնահատկությունները և կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման հնարավորությունները» գլխում ատենախոսը ներկայացրել է կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսագործնական կիրառման հնարավորությունները ՀՀ-ում: Միաժամանակ, ատենախոսն առաջարկել է ժողովրդավարության կոնսոցիատիվ մոտեցումը՝ կոնսոցիատիվիզմը ՀՀ խորհրդարանականության պայմաններում կիրառելու նպատակով: ՀՀ-ում խորհրդարանական մշակույթի էվոլյուցիան նեկայացնելու նպատակով համեմատվել են Հայաստանի Առաջին Հանրապետության և ներկայիս Հայաստանի Հանրապետության պառլամենտարիզմի մշակույթները, վերհանվել են հիմնական

առանձնահատկությունները: ՀՀ արտաքին քաղաքականության արդիականացման օրակարգը ներկայացվել է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարով:

Արդյունքում կարելի է փաստել, որ ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առաջադրված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններում հանրագումարի են բերվել հիմնական արդյունքները: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ հանդիսանալով դրա հիմնական դրույթների արտացոլումը: Հեղինակի կողմից հրապարակված թվով ութ գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսությունն աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և հիմնավորվածնությամբ: Ատենախոսությունը շարադրված է գրագետ, գիտավերլուծական բովանդակությամբ, այն հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Ուսումնասիրելով թեմային վերաբերվող ծավալուն գրականությունը՝ հեղինակը կարողացել է համակողմանիորեն վերլուծել կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսությունն ու ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները:

Նկատի ունենալով թեմայի բազմաշերտությունն ու բարդությունը՝ հարկ եմ համարում աշխատանքի վերաբերյալ կատարել նաև մի շարք դիտարկումներ, մասնավորապես՝

1. Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվել են պառլամենտարիզմն ու խորհրդարանական մշակույթը որպես տարբեր երևույթներ՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք, իրականում, գրեթե նույնական են: Փաստացի, կարելի է մեկնաբանել, որ պառլամենտարիզմի հիմքում առավելապես հենց խորհրդարանի մշակույթն է:

2. Աշխատանքը կշահեր, եթե համեմատական վերլուծության ենթարկվեին նաև ժողովրդավարության այլ տեսությունները ևս, մասնավորապես, Օ'Դոնելի պատվիրակային ժողովրդավարությունը, ինչը հնարավորություն կտար օբյեկտիվորեն գնահատել կոնսոցիատիվ ժողովրդավարության առավելություններն ու թերությունները ՀՀ-ում կիրառման առումներով:

3. Կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառման, գործառնության առանձնահատկությունների վերհանման տեսանկյունից, կարծում են, կարևոր էր նաև անդրադառնալ կոնսոցիատիվիզմի պայմաններում որոշումների ընդունման գործընթացի առանձնահատկություններին, ներկայացնելով որոշումների ընդունման փուլերը, մեթոդաբանությունը, տեխոնոլոգիրաները, մոդելավորումը և այլն: Սա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ կոնսոցիատիվիզմի չորս սկզբունքերից մեկը փոխադարձ վետոն է:

4. Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման մասին խոսելիս աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը անդրադառնար նաև այդ մոտեցման մեթոդական գործառնության հիմնահարցին, ինչին մոդելի տեսքով անդրադառնում է առաջին գլխի երկրորդ ենթագլխում: Գտնում եմ, որ այդ տարբերակով ցույց կտվեր, թե օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններում ժողովրդավարության այդ տեղակը սեգմենտների/ստրատաների ինչ համամասնությամբ պետք է ներկայացված լիներ, որպեսզի գնահատվի որպես արդյունավետ և ներդաշնակ հասարակության արտացոլում:

5. Խոսելով կոնսոցիատիվիզմի տեսանկյունից ՀՀ արտաքին քաղաքականության արդիականացման օրակարգի մասին կարծում եմ, որ աշխատանքը կշահեր, եթե հետազոտողը սահմանափակվեր միայն կարճաժամկետ տարբերակի վրա՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով ՀՀ կոնսոցիատիվ արտաքին քաղաքական ուղղություններին և առաջնահերթություններին: Սա հնարավորություն կտար հասկանալ ավելի մոտ ապագայում ՀՀ միատարր պետության պայմաններում կոսնոցիատիվիզմի կիրառման հնարավորությունները և հեռանկարները:

Նշված նկատառումները կհարստացնեին ատենախոսությունը՝ հնարավորություն տալով հեղինակին առավել խորը բացահայտելու և գնահատելու կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսության կիրառման առանձնահատկություններն ու դրանց տեղայնացումը ՀՀ օրինակով:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու շարադրանքի փոխկապակցված տրամաբանությունը, հեղինակի գիտական պատրաստվածությունը, վերջնարդյունք եզրահանգումները՝

գտնում եմ, որ Նարեկ Հրանտի Գրիգորյանի «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման արդյունավետությունը խորհրդարանական կառավարման համակարգում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կրթության և գիտության գծով պետի տեղակալ - ԱՌՀԻ-ի պետ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Տիգրան Քոչարյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտական քարտուղար, հ. գ. թ., դոցենտ **Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ**

22.09.2020 թ.